

Կ. Դանիելյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Հարություն Արարատյանը պատմական այն անձնավորություններից մեկն է, որի կյանքի տևողությանը երկար ժամանակ մնացել է անհայտության մեջ: Ծիշտ է, ժամանակին նրանով հետաքրքրվել են Ալ. Նրիցյանը, Պ. Պողոսյանը, Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը և ուրիշներ, մեր ժամանակ մի քանի պատմաբաններ ու գրականագետներ, բայց մինչև այսօր էլ նրա մասին չի գրվել և ոչ մի լուրջ ուսումնասիրություն, որը պարզեր Արարատյանի պատմական ծառայությունները և նշեր նրա տեղը հայ ժողովրդի հասարակական գործիչների շարքում:

Ներկա ուսումնասիրությունը նվիրված է Հ. Արարատյանի կյանքի ու գործունեության մի քանի կողմերի լուսաբանմանը:

* * *

Հարություն Արարատյանը ծնվել է 1774 թ. ապրիլի 20-ին, Վաղարշապատում, մի աղքատ արհեստավորի ընտանիքում: Նրա հայրը՝ Աստվածատուկ Խաչիկյանցը, Մուշի Վարդենիս գյուղից էր: Երիտասարդ ժամանակ ուխտ դալով էջմիածին, նա Սիմեոն կաթողիկոսի միջնորդությամբ ամուսնանում է զաղախեցի մի այրու դստեր հետ և հաստատվում այդտեղ: Հարությունը չորս ամսական էր, երբ մեռավ Աստվածատուրը: Այրին ստիպված էր ամեն տեսակ աշխատանք կատարել երեք որբերին պահելու համար:

Ծանր է եղել Հարությունի մանկությունը: Աղքատություն, կարիք, զրկանքներ՝ ընչպիսիք գյուղացու մի զառը մանկություն—անցած լացի, ողբի ու տառապանքի մեջ: «Ես,— պատմում է Արարատյանը իր հուշերում,— ամբողջ ուժով զգում էի, որ որբ եմ, որ իմ մայրը մի անօգնական ու աղքատ այրի է, և որ նա միայն մեծ զոհողություններով ու աշխատանքով է կարողանում հայթայթել մեզ համար ամենաաղքատ և անհրաժեշտ սնունդը»¹:

Փոքրիկ Հարությունը շնորհիվ մոր ջանքերի ու նախաձեռնության գրել-կարդալ է սովորում դպրոց չունեցող մի ուսուցչի մոտ²: Շուտով նա աշխատանքի է անցնում վանքի տպարանը: Այստեղ նա տեսնում է վանական կյանքի սարսափները: Գրեթե ոչ մի տարբերություն վանքի և գյուղի միջև. ֆալսիան, ծեծը, հայհոյանքը, կաթողիկոսի անտարբերությունը, միաբանների օտարոտի վարքն ու բարբը վարմանը ու վիրավորում են նրան:

Աշխույժ, հետաքրքրասեր, միամիտ և անփորձ՝ պատանի՝ ձգտում էր հասկանալ ու բացատրել իրեն շրջապատող աշխարհը: Կյանքի հարվածները նրան ստիպեցին ատել ընդ որ իշխանավորներին, վանքն ու նրա միաբանու-

¹ «Жизнь Артеми Арларатского...», СПб. 1813, ч. I, стр. 2.

² Այդ ուսուցիչը Հովհան Բանա Ոսկերչյանն էր: Սա միայն 1793—94 թթ. հաջադրեց մի փոքրիկ դպրոց բանալ Վաղարշապատում:

թյունը, անգամ կաթողիկոսին: Առանձնապես նրա համար ծանր էր կրթության նկատմամբ մարդկանց անհոգի վերաբերմունքը: Նրան ծեծում էին ու վիրավորում, ծաղրում ու սպառնում, որովհետև նա ցանկանում էր սովորել, ցանկանում էր գրաձանաչ դառնալ:

«Պյուղի յոթ հարյուր ընտանիքներից,— ասում է Արարատյանը,— հազիվ տասը մարդ գրագետ լինեք»¹: Մոդենու վանքի վանահայր Կարապետ վարդապետի մոտ փոքրավոր, ապա Աշտարակում աղեպան, կրկին կալմարարի աշակերտ, ուղեկցող ուխտավորների, սալլապան, Երուսաղեմից եկած Սահակ արքեպիսկոպոսի մոտ սպասավոր և այլն,— ահա այն «պաշտոնները», որ վարում էր Հարությունը իր պատանության օրերին:

1795 թ. հուլիսի 15-ին Հարությունը, հրաժեշտ տալով յուրայիններին, մեկ անգամ ընդմիջտ թողնում է Վաղարշապատը և ճանապարհ ընկնում դեպի Թիֆլիս: Քարավանը, որի հետ մեկնում էր Հարությունը, դալիս էր Թավրիզից: Մի հայ վաճառական հանձն էր առել Հարությունին հասցնել ռուսական սահմանը, հոգալով նրա ճամփի կարիքները:

Թիֆլիսում Հարությունը երկար չի մնում վաճառականի հետ, նա շուտով տեղափոխվում է Սղնախ: Այդ ժամանակ Աղա Մահմեդ խանը արագ արշավով մոտենում էր Թիֆլիսին: Շուտով լուր է հասնում, որ խանը գրավել է քաղաքը, Հերակլ Բ-ը պարտվել և հեռացել է Անանուրի կողմերը:

Դադստանից վերադարձած հայ վաճառականը որոշում է գնալ Թիֆլիս կամ Դուշեթ, կնոջը և ունեցվածքը փրկելու հույսով: Հարությունը, որ ապրում էր սղնախցի մի հայ բժշկի մոտ, հետևում է վաճառականին, ըստ երևույթին կարծելով, որ նա երբևէ կիրադործի իր խոստումը: Բայց վաճառականը ստորաբար խաբում է նրան:

Հարությունը նորից վերադառնում է Սղնախ, այնտեղից անցնում Չոխի դյուղը և գյուղի ստարշինայի, Գալոյենց Բաղդասարի հանձնարարականով, Մոմսես անունով մի մարդու հետ ուղևորվում է Ղզլար՝ 1795 թ. դեկտեմբերի 1-ին: Վաղիկավկազ—Մոզդոկ—Ղզլար ճանապարհը Հարությունն անցնում է մեկ ամսում:

Ղզլարում արդեն կենտրոնացվում էին ռուսական զորքերը: Սկսվում էր 1796 թ. կովկասյան նշանավոր արշավանքը: Ղզլարցի մի հայ քահանայի միջնորդությամբ Հարությունը, որպես ձիապան, ծառայության է մտնում հայազգի մայրը Ս(երերբով)-ի մոտ², և 1796 թ. մայիսի 1-ին ռուս զորքերի հետ հասնում Դերբենտ:

Գեներալ-ֆելդմարշալ գրաֆ Վալերիան Զուբովի բանակը 1796 թ. ամառային կամպանիայի ժամանակ խոշոր հաղթանակներ տարավ ադրբեջանական խանությունների դեմ: Դերբենտի, Բարվի, Ղուրայի, Գանձակի, Շաքիի և այլ խանություններ ռուսական հպատակություն ընդունեցին: Բայց աշնանը մեռավ Եկատերինա կայսրուհին: 26-ամյա ֆելդմարշալը հետ կանչվեց, և ռուսական զորքերը նահանջեցին մինչև Ղզլար: Հենց այդ ժամանակ Բարվից Ռուսաստան տեղափոխվող ստորաբաժանումներից մեկի հետ Հարությունը նավ է նստում

¹ „Жизнь Артеми Арапатского...“, СПб, 1813, ч. 1, стр. 4.

² Արարատյանն այս մարդուն անվանում է մայրը Ս-ը: Սեդրակյան Արիստակեսը Բուտկովի „Материалы...“, աշխատության մեջ գտել է Սերերբով անունով մեկին և իրավամբ կարծել, որ դա Արարատյանի հիշատակած անձնավորությունն է:

և հասնում Աստրախան՝ 1797 թ. սկզբներին, Մալխին նա մեկնում է Ստավրոպոլ, 1797 թ. Հարությունը որոշում է գնալ Պետերբուրգ։ Սկսվում էր նրա կյանքի մի նոր շրջանը։ Այդ շրջանի մասին Արարատյանը միայն հետևյալ հիշատակությունն է թողել. «Այսպիսով բնակություն հաստատեցի Ս. Պետերբուրգում. առաջին տարիներին շատ դժվարություններ տարա և չկարողացա խուսափել նոր արկածներից, թեկուզ ոչ այնքան վիրավորական, բայց ծիծաղելի լին՝ հանրապես։ Հետո, աստժո օգնությամբ ձեռք բերի օրինավոր կյանք և իմ ուժերի ներածին չափ այժմ ունեմ բարեվիճակ ապրուստ»¹։

Արարատյանի պետերբուրգյան կյանքի առաջին տարիները թաղված են խոր անհայտության մեջ։ Ի՞նչպես, ի՞նչ միջոցներով նրան հաջողվեց «բարեվիճակ ապրուստ» ձեռք բերել և բավական հայտնի դեմք դառնալ մայրաքաղաքի հայության մեջ։

«Համառոտ վարր և գրաւոր գործք տեառն Յոհաննու Աւագ Քահանա Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ» (Տիփսիս, 1859) աշխատության մեջ Առաքել վարժապետը, խոսելով Հ. Արարատյանի մասին, հայտնում է, որ նա Պետերբուրգում մի ոտու «մայրագիր» է ունեցել և որ մայրագրի մահից հետո, Հովհան քահանային ի տնօրինություն է ուղարկել «պթանկագին կահ կարասիս տան նորա»²։

Ո՞վ է եղել այդ մայրագիրը։

1815 թ. փետրվարի 19-ին «բարեծնունդ ազնիւ» Հարություն Արարատյանին ուղղած իր նամակի մեջ Ներսես Աշտարակեցին գրել է. «Ողջ լեբ և ողջոյն տուր յինէն օրհնեալ ծերունազարդ Կատարինէ Զաքարովնայ մօրն օտարականազն՝ աղքատաց և ամենայն հոգեւորականաց»³։ Մեզ հաջողվեց գտնել հիշյալ Կատարինէ Զաքարովնայի երկու կտակները՝ կազմած 1804 և 1808 թթ.։ Ահա թե ինչ է գրված վերջին կտակում. «...Ես Զուղայեցի ի Քրիստոս հանգուցեալ հաղարեան աղա Գրիգորի կենակից և օրինաւոր ամուսին, Կատարինէ Զաքարեանս՝ ազգաւ հայ և հաւատացեալ ի Քրիստոս, ...յոժար կամաւ և լիալիր մտադրութեամբ իմով ...զսոյն կտակ հաստատեցի»⁴։

Կտակակատարներ կարգելով Եփրեմ կաթողիկոսին, Սոփիա Աղամալովնային և մայրը Սարգիս Եսայան Հոռու Մելիքյանին, Կատարինէ հաղարեանցը հանձնարարում է. «Հարիւր թուման մատուցի վերոյիշեալ հոգաբարձուին իմոյ և հոգեւոր հօրն սրբազանակատար Եփրեմայ Հայրապետին։ ...Աստուածատուրեան Յարութիւն Վաղարշապատեցւոյ, էթե մնասցէ առ իս մինչև ցմահն իմ յիսուն թուման, իսկ եթէ գնասցէ ոչինչ տացի»։ Անկասկած է ուրեմն, որ Առաքել վարժապետի հիշատակած մայրագիրը՝ նույն ինքը Կատարինէ Զաքարովնան է⁵։

Կատարինէի ամուսինը՝ Գրիգոր հաղարեանցը 1781 թ. Պետերբուրգում հիմնել էր Ռուսաստանում առաջին հայկական տպարանը։ 1787 թ. նա այդ

¹ «Жизнь Артеми Арапатского...». СПб. ч. II, стр. 260.

² «Համառոտ վարր և գրաւոր գործք տեառն Յոհաննու ա. ք. Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ», Տիփսիս, 1859. էջ 18։

³ Մտակնադարսն, կաթ. գիվան, թղթապաշակ 164ա, վավ. № 242։

⁴ Նույն աեղում, թղթապաշակ 21, վավ. № 14։

⁵ Կասկած է հարուցում այն, որ ըստ Առաքել վարժապետի, Արարատյանի մայրագիրը ռուս է եղել. մենք հակված ենք կարծելու, որ Առաքել վարժապետը գործից անտեղյակ է եղել։

տպարանը վաճառեց Ռուսաստանի առաջնորդ Հ. Արդուլյանին և ինքը մեռավ. մեծ պարտքեր թողնելով՝, նրա մահից հետո, շուրջ մեկ տարի, Կատարինեն ղեկավարում էր տպարանի գործը: «Կատարինեն հալոյարյանը, — իրավացիորեն նկատել է Լեոն, — առաջին հայուհին էր իբրև հրատարակչուհի»²: Նա ռենդենկեր-բարեկամների լայն շրջան, ծանոթ էր Լազարյաններին, մանավանդ շատ մտերիմ էր Կատարինե Իվանովնա Լազարյանի հետ. անհավանական չէ, որ նա մոտիկից գիտեր գրաֆ Ա. Պ. Զուբովին, որին Արարատյանը նվիրել է իր մեմուարները: Կատարինեի նամակագրությունը երեք կաթողիկոսների (Հովսեփ, Դանիել և Նիփրեմ), Ներսես Աշտարակեցու և այլ եկեղեցական ու հասարակական գործիչների հետ, պետերբուրգյան բաղամթիվ կապերն ու ժամոթությունները ցույց են տալիս, որ նա ժամանակին աչքի ընկած հայուհին էր մեկն է եղել: Դեռ 1788 թ. նա հրատարակեց ամուսնու աշխատությունը՝ «Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան», որով հայ ընթերցողին հնարավորություն էր տրվում դուրսովյաժք սովորելու ռուսաց լեզուն: 1818 թ. նա կայսեր հաճութունն ստացավ Պետերբուրգում «Հայոց լեզուի» ուսումնարան բանալու: «Ուրախութիւն եղև նաև, — ի պատասխան նրա նամակի, — գրում է Ներսես Աշտարակեցին, — զուարճարար լուրն յաղագս ամէնաողորմած կայսեր բարեհաճելոյն հիմնելի թագաւորաւայել քաղաքի այդր՝ ուսումնարան հայոց լեզուի, և բերկրալի ևս՝ զի ուսուցիչն իսկ դտանե ազգ օտարալեզու»³: Կատարինեն հալոյարյանի առաջին կտակում (1804) Հարություն Արարատյանի անունը չի հիշված. ուրեմն Արարատյանը նրան հանդիպել է 1804—1808 թթ. շրջանում, այսինքն այն ժամանակ, երբ նա երեսունին մոտ մի երիտասարդ էր: Չենք կարծում, որ մինչ Կատարինե Զաքարովնային հանդիպելը, Արարատյանը ապրուստի միջոց չէր ձարել: Դեռևս Աստրախանում նա փորձում է սովորել ռուսաց լեզուն մի այլ բենարանի օգնությամբ: Պետերբուրգում, հասկանալի է, նա պետք է շարունակեր ռուսերենին տիրապետելու գործը⁴: Փաստերի բացակայության պատճառով անհնար է մի ստույգ բան ասել, թե ինչպես, որտեղ և երբ է նա աշխատանքի անցել: Ենթադրում ենք, որ Պետերբուրգ հասնելուց հետո Արարատյանը դիմել է տեղի հայկական եկեղեցուն, որտեղ և ըստ երևույթին, գտել օթևան և աշխատանք: Ալ. Երիցյանը իր մի ուսումնասիրության մեջ հայտնում է, որ Հ. Արարատյանը, դժուարով Պետերբուրգ, ռուսաց լեզուն սովորեց և դարձավ դատարաններում թարգման⁵: Իսկ Դանիել կաթողիկոսի 1808 թ. մարտի 29-ի Արարատյանին գրած նամակից⁶ երևում է, որ նա պարապել է նաև վաճառականությամբ, ըստ որում կտորեղենի առևտրով, որովհետև «բազազ» հորջորջումը հենց այդպիսի իմաստով էր գործածվում

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գիրք, որ կոչի ընդհանրական... սանկա Պետերբուրգ, յամի 1788, էջ 324—332:

² Լեո, Հայոց պատմություն, Երևան, 1940, հատ. 3, էջ 1056:

³ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթապանակ 164ր, վավ. № 11971:

⁴ 1788 թ. (այսինքն Արարատյանի Պետերբուրգ հասնելուց մեկ տարի հետո) արդեն հրապարակի վրա էին Նիփրեմ Խալոյարյանի «Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» և Կղեկապուտիկա Ստեփանի «Գիրք որ կոչի բանալի դիտութեան» ուսուցման ձևերը: Մեզ թվում է, որ Արարատյանը, առաջնորդվել է հենց այդ ձևերով: Անհավանական չէ նաև, որ նա փորձեր ծանոթանալ գրքերն հրատարակողների հետ:

⁵ Ալ. Երիցյան Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Թիֆլիս, 1894, էջ 99:

⁶ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթապանակ 19, վավ. № 1891:

այդ ժամանակ: Համենայն դեպս պետք է կարծել, որ մինչ Կատարինե եւադարյանին հանդիպելը, Արարատյանը պետական ծառայության մեջ չի եղել: Այդ ենթադրել է տալիս հետեւյալ հանգամանքը: Դատարաններում թարգմանչի պաշտոնով աշխատելու համար առնվազն անհրաժեշտ էր ռուսերենի լավ իմացություն: Իր մեմուարների առաջաբանում, 1813 թ. Արարատյանը գրել է. «Այս գրքի հրատարակությունը կարող էր լինել և մեկ տարի սրանից առաջ, բայց ռուսերենի իմ չիմանալը և այլևայլ պակասությունների պատճառով այն անիրագործադրելի մնաց»¹:

Չպետք է կարծել, իհարկե, որ Արարատյանը 15 տարի Պետերբուրգում ապրելով չէր կարողացել սովորել ռուսաց լեզուն²: Նրա խոսքը այստեղ իր թարգմանչական կարողությունների մասին է, որովհետև նա այդ ժամանակ իր գիրքը հայերենից ռուսերեն էր թարգմանում: Արդ, հնարավոր էր այդպիսի տվյալներով թարգմանչի պաշտոն ձեռք բերել ցարական դատարանում: Մնում է ենթադրել, որ Արարատյանը պետական ծառայության է անցել 1813 թ. ոչ շուտ: 1815 թ. հուլիսին իշխան Ա. Ն. Գուլիցինին ուղղած մի նամակի վերջում Արարատյանը դնում է իր աստիճանը՝ «коллежский секретарь»³. «Собрание актов, относящихся к обозрению Армянского народа» ժողովածվի երրորդ հատորում, Մոսկվայի Հազարյան ճեմարանին կից հիմնադրված «Հնասերների ընկերության» իսկական անդամների ցուցակում կա նաև Հարություն Արարատյանի անունը՝ «губернский секретарь»-ի աստիճանով⁴:

Մինչև 1808 թ. Արարատյանը զբաղվել է վաճառականությամբ: 1808 թ. Մխիթարյանների դեմ գրած մի բանաստեղծության մեջ նա ասում է, որ ինքը վաճառական է և ակնարկում, որ իրեն համար մեծ անպատվություն էր նրանց պատճառով, հասարակության մեջ ծաղրվելը⁵:

Կատարինե Զաքարովնայի տունը, որտեղ ապրում էր նա, չէր կարող հայտնի չդարձնել Արարատյանին, որովհետև այդտեղ էին մուտք գործում ժամանակի հայտնի հոգևորականներն ու աշխարհիկ անձինք, ռուս պաշտոնավորներն ու ազնվական տիկիները: Մի փաստաթղթից պարզվում է, որ նապոլեոնի պարտությունից հետո Փարիզում եղած հայ զորապետները ճանաչել են Արարատյանին և ուղարկել Մխիթարյանների դեմ նրա գրած բանաստեղծության մանրամասները⁶: Իսկ այդ ժամանակ իր զորամասով Փարիզ էր գտնվում գեներալ-մայորի աստիճան ստացած Վ. Գ. Մադաթովը, Հովհաննես

¹ «Жизнь Артеми Арапатского...», СПб, 1813, ч. I. От издателя.

² Արիստակես Սեդրակյանը Արարատյանին մեղադրում է ստախոսության մեջ, տրամաբանելով, թե մեկ տարում հնարավոր չէր այնքան ռուսերեն սովորել, որ կարելի լիներ գիրք գրել: Այստեղից էլ նա եզրակացնում է, որ Արարատյանը ոչ թե ռուսերեն չի իմացել այլ հայերեն, և առաջարկում այդ փաստը նշել է, որպեսզի կոճկի (հայերենի իր իսպառ չիմանալը): Այդ անհրաժեշտ էր Սեդրակյանին ցույց տալու համար, որ Արարատյանը անգրագետ, անուսում մեկն է եղել, նախքան Պետերբուրգ հասնելը: Այստեղից էլ նրա կյանքի պատմությունը, բրի հիմնական դիժը պայթարն էր եղել հոգևորականության դեմ՝ ի սեր ուսման ու կրթության, դուրս կգար հորինված և սուտ ու փուտ մի պատմություն:

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 27, վավերագիր № 41:

⁴ «Собрание актов, относящихся к обозрению армянского народа», ч. 3, стр. 66. Զարմանալին այն է, որ 1923 թ. Արարատյանը ավելի փոքր աստիճան է ունեցել, քան 1815-ին: Մեր կարծիքով սա մի պատահական թյուրիմացության արդյունք է:

⁵ Մատենադարան, ձեռ. № 2864, էջ 2:

⁶ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթապանակ № 38, վավ. 188ա:

Հաղարյանը, Դավիթ Արամելիքյանը, նշանավոր վաճառական Հովհաննես Արամելիքյանի եղբայրը¹ Վերջինիս կինը՝ Աննա Դավիդովնա Արամելիքյանը, որ 1832 թ. արքունիք կանչվեց², Կատարինե Ջաբարովնայի բարեկամուհին էր։ Արարատյանի այդ բանաստեղծությունը ծանոթ է եղել Եփրեմ կաթողիկոսին, ներսես Աշտարակեցուն, իսկ Մանվել վարդապետ Կյումուշխանեցին մի հատուկ նամակով դիմել է Մխիթարյաններին՝ հաշտության ձեռք մեկնելով նրանց և մեղադրելով Արարատյանին անտեղի հարձակումների համար³։ Ալ. Երիցյանն ասում է, որ Արարատյանը ղյուր զվարճախոսության համար ...մուտք ուներ ուսաց մի քանի մեծամեծների և մանավանդ իշխան Գուլիցինի մոտ⁴։

Եվ իրոք, նա անձնապես ծանոթ է եղել գեներալ Վորոնցովի⁵, Պետերբուրգի կայսերական դրաղարանի դիրեկտոր Ա. Ն. Օլենինայի⁶ և այլ բարձրաստիճան անձնավորությունների հետ։ Ունենալով բարեկամների և ծանոթների այս շրջանն, Արարատյանն իրեն ազատ էր զգում միջամտելու Պետերբուրգի հայության ներքին գործերին, մասնակցելով ամեն մի հուզող հարցի քննության, կազմելով խնդրագրեր, ողջունելով ձեռնարկված և ազգին շահավետ ամեն մի քայլ, նամակներով, այցելություններով, այլ միջնորդություններով հաջողեցնելով հայրենիքից եկած յուրաքանչյուր խնդրանքի կատարումը։ Ես, ինչպես միշտ, ծանակում էր տգետ ու անբան հոգևորականներին, հետևում եկեղեցական վեճերին և այլն։ Մանվել Կյումուշխանեցին Եփրեմին ուղղած մի նամակի մեջ գրել է. «1814 թ. իբրև էաք ընդ առաքելաշաւիղ դետին (Հովհաննես արեւպիսկոպոսի մասին է խոսքը—Կ. Դ.) ի Պետերբուրգ։ Գիտէ՞ք զբարս Յարութին՝ Վաղարշապատեցոյն, միշտ բռնադոժ առնէր զառաքելաշաւիղ առաջնորդն, ընդ նմին և համայն հոգևորականսն, որք շունին փոյթ հոգալ զպակասութիւն եկեղեցւոյն և այլն որպէս գիտէք զբարս Արարատովին»։

1813 թ. Արարատյանն հրատարակեց իր մեմուարները։ «Կատարելով մորս և դաստիարակիս կտակը,—գրում է նա «Կյանք»-ի առաջաբանում,—որոնք ներշնչել են ինձ միշտ հիշողությանս մեջ պահել ինձ հետ պատահած բոլոր թշվառությունները, և զրանով ճանաչել աստծո իմ վրա ունեցած բարությունը, ես զրի առա իմ բոլոր արկածները և լրացնելով ըստ ժամանակների, հավաքեցի և կազմեցի նրանցից իմ կյանքի լրիվ պատմությունը⁷։ Հայրենն լեզվով։ Մի քանի անձնավորություններ, որոնք եղել են անցյալ պարսկական պատերազմում և ինձ բավական ճանաչում են, ստիպեցին և համարյա հարկադրեցին ձեռագիր վերջապես թարգմանել ուսերեն, իսկ իմ գրքի նման շատ հրատարակությունների օրինակը պայման դարձավ, որ ես լույս ընծայեմ իմ հուշագրերը (записки)⁸։

¹ М. Персиян, Из истории русско-армянских отношений, том 1, стр. 130—134.

² С. Арешян, Армянская печать и царская цензура, стр. 27.

³ Մատենադարան, ձեռ. № 2834, էջ 2։

⁴ Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, Թիֆլիս, 1891, էջ 96։

⁵ Ст. «Собрание актов, относящихся к обозрению армянского народа», ч. III, стр. 283.

⁶ С. Арешян, Армянская печать и царская цензура, стр. 81.

⁷ Մատենադարան, Կաթ. դիման, թղթապանակ 38, վավերագիր 188ա։

⁸ Պ. Պողոսյանը Արարատյանի «Կյանք»-ի հայերեն թարգմանության առաջաբանում գրել է. «Լսված է՝ թե կա նրա հիշատակարանի երրորդ մասը՝ Պետերբուրգի կյանքի քայքայի բոլոր մեր կարծեաց, կամ թյուրիմացություն է կամ ենթադրություն» (Վաղար-

Մեկ տարում չէ, որ Արարատյանը գրել է իր մեմուարները. նախապատրաստական աշխատանք այդ ուղղությամբ նա կատարել է սկսած 1809—1810 թթ.: Արարատյանի նախկին տւսուցիչ և մոտիկ բարեկամ Հովհան քահանա Ոսկերչյանը 1811 թ. նրա խնդրանքով գրում է մի փոքրիկ հիշատակարան, որն ընդգրկում էր 1751—1804 թթ. Արարատյան աշխարհում տեղի ունեցած պատմությունը և ուղարկում աշակերտին, երևի, 1812 թ.: «Յասմհետէ կացուցից քառասօցին բան ճշգրիտ պատմութեան ով բարենախանձ սերունդ հայոց՝ աղնուամիտ զուարթագեմ Աստուածատրեանդ Յարութին, հարազատ ծնունդ մեծին Վաղարշապատու, հարկեալ եմ ի թախանձանաց քո հայրենասէր իղձից՝ որդեակ հուկծնունդ: Եւ զի թեպէտ սկսայ ի 1200 թուէն զկնի պակասելոյն յնշխնհէ նաղիր շահի Պարսից մինչև ի 1253 թ. մեր, սակայն ոչ զըրովնդակն գործոց որ յԱրարատ կարաց ըստ կարգի պատմութեան հանել գիր»¹:

Ոսկերչյանից բացի, Արարատյանն օգտագործել է բազմաթիվ այլ աղբյուրներ: Թուս պատմաբան Բուտկովի «Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г.» (СПБ, 1869, ч. 2) գրքի և Հ. Արարատյանի մեմուարների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ թե մեկը և թե մյուսը XVIII դարի երկրորդ կեսի պատմության որոշ գրվագներն երկայացնելու համար օգտվել են միևնույն աղբյուրից²: Արարատյանը ըստ երևույթին շատ է թերթել պետերբուրգյան վեդեմոստները, կարդացել զանազան գրքեր, և նույնիսկ իր մեմուարների հրատարակությունից 5—6 տարի անց, դեռ հետաքրքրվում էր մի բանի պատմական տեղեկություններով, դիմելով դարձյալ իր քաջահմուտ ուսուցչին: Ոսկերչյանը 1819 թ. նրա խնդրանքով գրեց ևս երեք ուսումնասիրություն Արարատի, Սևանա լճի և Կողբի աղահանքերի մասին: Արարատյանը իր ձեռքի տակ է ունեցել հին հայկական ձեռագրեր, մի քանի հիշատակարաններ և անկասկած ծանոթ եղել 1808 թ. Հովսեփի Հովհաննիսյանի հրատարակած Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը»: Նրա գրական ճաշակը և պատմագիտական հմտությունը զարգացել էր ռուս դրականության և հասարակական մտքի զխալովր օջախում՝ Պետերբուրգում: Ժամանակի ռուս բանաստեղծները, գրողները չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ նրա վրա: Արդեն նկատված փաստ է, որ Արարատյանի մեմուարները, գրված են Կարամզինյան շկոլայի տրագիցիաներով: 1811 թ. Ե. Խուրտվը Պետերբուրգում հրատարակեց մի հիշա-

շապատեցի Հարություն Արարատյանի կյանքը, Թիֆլիս, 1892, էջ Ը): Գուցե և իրոք եղել է կյանքի երրորդ մասը: Արարատյանն ասում է. «Կաղմեցի իմ կյանքի լրիվ պատմությունը»: Եթե նա զրի առած լիներ իր արկածները մինչև 1797 թ., այդ զեպրում կյանքի պատմությունը լրիվ չէր լինի: Հավանական է, որ ենթադրվող երրորդ մասը, ըստ էության ոչնչով չի համապատասխանել այն նպատակին, որ նա հետապնդում էր հրատարակելով իր մեմուարները: Պետերբուրգի նրա բարեկամների համար «կյանքի» երրորդ մասը, առանձին հետաքրքրություն չէր ներկայացնելու: Այլ լին. Արարատյանի խոցող և երգիծական ոճը կարող էր վիրավորական լինել շատերին և այդ իմաստով, միանգամայն անպատեհ կդառնար երրորդ մասի հրատարակությունը: Հնարավոր է, որ այդ հատվածը ձեռագիր վիճակում կարդացել են մի քանի մտերիմներ և դրանից մնացած հիշողությունն է, որ հասել է Պոռչյանին 1892 թ.:

¹ «Жизнь Артемия Араратского...», СПб, ч. I, от издателя.

² Արխատակես Սեդրակյանը, նկատելով Բուտկովի և Արարատյանի համեմատությունները, Արարատյանին մեղադրում է զրազոգության մեջ, որովհետև Արարատյանը օգտվել է Բուտկովի աղբյուրից: Հետաքրքիր է, ինչ կասեր Սեդրակյանը, եթե մեկը, ցույց տալով նրա աշխատությունների աղբյուրները՝ մեղադրեր նրան... զրազոգության մեջ: Կամ ինչու այդ զեպրում Բուտկովը զրազոգ չէ, իսկ Արարատյանը զրազոգ է:

տակարան, որտեղ պատմում էր էջմիածնի մասին՝ Սիմեոն կաթողիկոսի ժամանակներից սկսած¹։

Մեզ թվում է, որ խուբովի այս հիշատակարանը հենց այն աշխատություններից մեկն էր, որոնց հրատարակությունը տեսնելով, Արարատյանը որոշում է լույս ընծայել իր հուշագրերը։ Արարատյանի մեմուարները մեծ արձագանք գտան ինչպես հայ, այնպես էլ ռուս ընթերցողների շրջանում։ Թիֆլիսում և Պետերբուրգում, Ռուսաստանի զանազան քաղաքներում, նաև Եվրոպայում Արարատյանի «Կյանք»-ը գտավ իր ընթերցողներին։ Գրիբոեդովը և Պուշկինը, Աբովյանը և Դորպատի համալսարանի պրոֆեսորները², հայերը և այլազգիները կարդացին և քննարկեցին այն։ Ամբողջ Ռուսաստանը և Եվրոպան ընթերցեց Արարատյանի մեմուարները, — ասում է Միքայել վարդապետ Սալլանյանցը³։ Աբովյանին դրած մի համակի մեջ³, 1821 թ. Հալլենում՝ գերմաներեն և ապա 1822 թ. Լոնդոնում՝ անգլերեն լեզուներով հրատարակվելուց բացի, այդ գիրքը թարգմանվեց նաև ֆրանսերեն ու վրացերեն և երկար ժամանակ՝ մինչև XIX դարի վերջերը համարվում էր կովկասագիտական լավագույն պատմաղբյուր։

Հրատարակելով իր մեմուարները, Արարատյանը ռուսական կայսրության ուղադրությունն էր հրավիրում դեպի Կովկաս, դեպի այն ժողովուրդները, որոնք դեռ սպասում էին նվիրական ազատագրությանը, սպասում էին ռուս զինվորին, որի զենքի փառքը արդեն թնդում էր Եվրոպայով մեկ։

Արարատյանի մեմուարները հրատարակվել էին ժամանակին։ Հայաստանը պրավեց շատ-շատերի ուղադրությունը, Արարատյանը դարձավ հեղինակություն։ Իրեն այս շրջանից էլ նա անցել է պետական ծառայության, ըստ որում՝ որպես մեզ թվում է) իշխան Գուլիցինի ղեկավարած օտարազգի դավանությունների պետական վարչությունում։

Պահպանվել է 1815 թ. Ա. Ն. Գուլիցինին հասցեագրած Արարատյանի մի նամակը, որ պատմական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։

Իշխան Գուլիցինը, որն այն ժամանակ Սինոդի օբեր-պրոկուրորն ու օտարազգի դավանությունների պետական վարչության կառավարիչն էր, ստանում է Արարատյանի ընդարձակ, մեկ մամուլ ծավալով, նամակը 1815 թ. հուլիսին։

Մի ամբողջ քաղաքական ծրագիր էր մշակված այդ նամակում։ Ցույց տալով, թե հայ ժողովուրդը ինչպիսի նախանձախնդրություն ու ջանք է գործադրել 1796, 1804, 1808, 1810, 1813 թթ. պատերազմներում՝ օգնելով ռուսական բանակին, Արարատյանը ղնում է այդ ժողովրդի պատմական բախտի հարցը, և փորձում ռուսական կառավարությանը ներկայացնել հարցի լուծման իր նկատառումները։ Արարատյանն, իհարկե, իր ծրագրով հետապնդում էր ավելի փոքր նպատակ. նա ցանկանում է, որ Ռուսաստանի կողմից նվաճված պարսկական խանություններում հայերին մեծ առանձնաշնորհումներ տրվեն, որովհետև նրանք իրենց արյամբ են նվաճել դրա իրավունքը։ Ինչպիսի ուղիներ կան այդ բանին հասնելու համար։ Արարատյանը ամենից առաջ ղնում է խանություններում գոյություն ունեցող վարչական սխտեմի լրիվ փոփոխման հարցը. պարսիկ խաներից պետք է վերցվի կառավարման ամեն մի իրավունք, բավական է յուրաքանչյուր գավառում նշանակել մի կոմենդատ՝ ռուսներից տալով

¹ Е. Худов, Описание достопамятных происшествий в Армении..., СПб, 1869.

² Տե՛ս ևս Աբովյան, Նրկերի լիակատար ժողովածու, հատ. Ծ, Երևան, 1955, էջ 251։

³ «Ի՞նչ է Աբովյանի», Երևան, 1948, հատ. 2, էջ 641։

Պրան հարկի, վեճերի և զուտ տեղային նշանակություն ունեցող այլ խնդիրների տնօրինման լիազորությունները¹։ «Այս բանի առաջին հետևանքը կլինի այն, — գրում է նա, — որ գանձարանը բոլոր տեղերից հավանաբար կստանա ամենաքիչը կրկնակի, եթե ոչ եռակի»։

Երկրորդ, որ կառավարության այդպիսի բարերար ձեռնարկումը, բավարարելով երկրի բոլոր մասերում հայ հասարակության սպասելիքները, առևտրի մեջ առաջ կբերի հրաշալի փոփոխություններ, որովհետև այն (առևտուրը) նրանց ձեռքին է գտնվում²։

Արարատյանի տեսակետները վաղօրոք ծանոթ էին ոչ միայն ներսևս Աշտարակեցուն և Եփրեմին, այլ արքեպիսկոպոս Հովհաննեսին, նաև Պետերբուրգի հայությանը և ըստ երևույթին կազարյաններին։ Արքեպիսկոպոս Հովհաննեսը, ինչպես երևում է Արարատյանի նամակից, նույնացիների հարցով սկզբում կամեցել է դիմել միևնույն տեղի կոմիտեին։ Բայց «տեղի հայ հասարակության գլխավորների խորհրդով, — ասում է Արարատյանը, — որովհետև դիմել գլխավոր հրամանատարին» (Գուդովիչին)»։ «Բայց ես գտնում եմ, — շարունակում է նա, — որ այդ միջոցը չի լինի և չի կարող լինել ցանկալի գործողություն», որովհետև գլխավոր հրամանատարին միմիայն անհրաժեշտ է կառավարությանը հավաստել Վրաստանի և նախկին պարսկական գավառների բարեվիճակությունը. նա բոլորովին չի ցանկանա հետամուտ լինել ոչ գործի մանրամասներին և ոչ էլ այնպիսի միջոցառումների մշակմանը, որոնք կարող են բարձրագույն իշխանության միջնորդությունը պահանջել³։

Արարատյանի նամակում իրենց արտահայտությունն են գտել հայերին համակած դժգոհության մոմենտները։ Նամակի տոնը, դիտողություններն ու առաջարկները, կազմած ծրագիրը գուցե հանդուգն կամ անժամանակ թվացին բարձրագույն կառավարությանը, և այդ պատճառով հետևանքներ չունեցան։ Բայց Արարատյանը շարունակում էր իր գործը. ոմն Սիմեոն Նիկիֆորովի 1815 թ. սեպտեմբերին Եփրեմ կաթողիկոսին դրած նամակից երևում է, որ Արարատյանը Պետերբուրգում ձեռնարկել է մի ինչ որ մեծագործություն, որի դեմ դուրս են եկել ազգայիններից շատերը. «Համարյա բոլորը, — գրում է նա, — փոխանակ օգնելու Հարությունին, ով ինչպես կարող է, և կամ նայելու նրան նախանձով, գործում են նրա դեմ և հետևապես ամբողջ ազգի դեմ»⁴։ Այժմ դժվար է կռահել, թե ինչ մեծագործության մասին է խոսքը։ Համենայն դեպս դա եղել է ամբողջ հայությանը վերաբերող մի գործ, մի հանդումաճք, որ դարձյալ խոսում է Արարատյանի հասարակական գործունեության լայն շրջանակների, նրա պատմական ծառայությունների մասին։

1817 թ. գարնանը Արարատյանը մեկնեց Փարիզ։ Մոտ երկու տարի նա մնաց Եվրոպայում։ «Annales politiques, morales et litteraires»-ի և «Gazette de France»-ի մեջ Արարատյանի տպագրած հոդվածներից տեղեկանում ենք, որ նա ճանապարհորդելու նպատակով է Եվրոպա մեկնել։ «Տեսնելով Փարիզի՝ քաղաքակրթված աշխարհի այդ մայրաքաղաքի բոլոր սքանչելիքները, — գրում է

¹ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթապանակ 27, վավ. 41։

² Նույն տեղում։

³ Նույն տեղում։

⁴ Նույն տեղում։

⁵ Նույն տեղում, վավ. 51։

նա, — և ճանապարհորդի հետաքրքրության առաջ բացված հոյակապ հավաքածոները, ես մտահղացա թողնել մի հիշատակ դրանցից մեկին»¹։ Նա որոշել էր Փարիզի թագավորական գլխավորաբանին նվիրել հայկական մի քանի ձեռագրերի մեջ էր նաև Հովհան քահանա Ոսկերչյանի «Հիշատակարան»-ը։ Արևելյան լեզուների պրոֆեսոր Շահան Զրպետյանը, որ Արարատյանից վերցրել էր նվիրաբերելիք ձեռագրերը, և առանց իրավատիրոջ թույլատվությունն ունենալու պատճենահանելուց հետո վերադարձրել նրան, Փարիզում հրատարակվող Միլլինի «Էնցիկլոպեդիական Տարեգրություններ»-ում 1818 թ. հուլիսին տպագրեց մի պատմական ուսումնասիրություն, որի բովանդակությունը ամբողջությամբ վերցված էր Արարատյանի ձեռագրերից։ Արարատյանը հանդես եկավ այդ անօրինականության դեմ, մեղադրելով Զրպետյանին գրագողության մեջ։ Եվ որպեսզի ձեռագրի բովանդակությունը հայտնի դառնա ֆրանսիացի ընթերցողներին, նա նշանավոր արևելագետ Կլարրոտի մասնակցությամբ թարգմանեց և հրատարակեց Հ. Ոսկերչյանի հիշատակարանը²։ Այդ մասին մի տեղեկություն կա «Gazette de France»-ի 1818 թ. № 209-ում³, Կլարրոտը, իր «Ասիական հիշատակարանը» աշխատության առաջին հատորում խոսելով Հ. Ոսկերչյանի մասին, գրել է. «Հեղինակը (Հ. Ոսկերչյան—Կ. Դ.) գրեց զան (ժամանակագրությունը) ի խնդրոյ յուր աշակերտին՝ Հարություն Աստվածատրո, որն իր հայրենյաց հետ շարունակ թղթակցության մեջ է և որն որ գրականության մեջ ծանոթ է իր ճանապարհորդությանց և անցից պատմությամբ, հրատարակված ուսերեն, երկու հատորով, 1813-ին, Պ. Հարություն Փարիզ գտնվելով առաջարկեց ինձի իր հետը Ոսկերչյանին ժամանակագրությունը գաղերենի թարգմանել և տեսնելով, որ ատոնց պարունակությունը հետաքրքրական էր, սիրով հանձն առի առաջարկությունը։ Հայերեն չեմ գիտեր, բայց պ. Հարություն անձամբ ինձի թարգմանեց բառ առ բառ զբնագիրեն ի ուսերեն, ուսկից գաղիերեն դարձուցի»⁴։

Փարիզում Արարատյանը կազմակերպում է բացվելիք ներսիսյան հոգևոր դպրոցի համար տեղի հայերի նյութական օգնությունը⁵։ Այդ առթիվ նա բազմաթիվ նամակներ է գրել ներսես Աշտարակեցուն։

Եվրոպայից վերադառնալուց հետո Արարատյանն ղրադվում է իր մեմուարների թարգմանության գործով։

Հայտնի են Արարատյանի երկու բավական ծավալուն բանաստեղծությունները, առաջինը (ակրոստիկոս) գրված 1809 թ. (Մխիթարյանների դեմ) երկրորդը՝ 1831-ին, որը խիստ արժեքավոր տեղեկություններ է պարունակում Արարատյանի կյանքի վերջին շրջանի մասին։

¹ «Собрание актов, относящихся к обозрению Армянского народа», ч. III, стр. 292, (բնագրումն իմն է—Կ. Դ.)։

² Հովհան Ոսկերչյանի հիշատակարանը մեղանում առաջին անգամ տպագրվել է 1882 թ. ապրիլին՝ «Կոունկ»-ում՝ «Հիշատակարան ազգային արդիան պատմության համար» բնդհանուր վերնագրի տակ։ Հրատարակիչների համար անհայտ է եղել ժամանակագրության հեղինակը, և որ դարմառային է նրանք կարծել են, որ ժամանակագրությունը գրվել է 18-րդ դարում (տե՛ս «Կոունկ», 1882, թ. Դ, էջ 313), մինչդեռ Ոսկերչյանի հիշատակարանի վերջում ասվում է, որ այն գրվել է 1811 թ.։

³ Տե՛ս «Собрание актов...», ч. III, стр. 295.

⁴ «Բանաստեղծ», Կ. Պոլիս, ա. դարի, սեպտեմբեր, 1851, թ. 9, էջ 398։

⁵ Տե՛ս Մատենադարան, Կաթ. դիվան, թղթապանակ 193, վավ. № 214։

Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

Ձի յետա գայդ բան իսկ ցուցանէ,
Ի խոսել նիւրոյս զիս յոյժ ստիպե,
Ձուղիղն յայտնել մտացս խղճէ,
Հրատարակեցից ի լուսոյ բանէ,
Բոլոր Եւրոպայ և Լիբիայի,
Եւ Արաբիայ եգիպտականի,
Ձինչ նոր տեսի և ստուգեցի,
Քննութիւն մտեալ ճիշտ որոնեցի,
Ձնոսին համայն լոյս ընծայեցի,
Ամեն խնգրողաց ձրի բաժնեցի:
Ի նոցունց զումն էր բաղմատերէն,
էր և ի լեզու մեծ Գաղիերէն,
Ձումն Անգլիա և ռուսերէն,
Պես-պէս ի ժուռնալ միլեօրտօգօրէն¹:

Այս հատվածից հրեում է, որ Արարատյանը շրջել է ոչ միայն Եվրոպայում, այլև Եգիպտոսում, Լիբիայում և ինչ որ տեսել, գրի է առել ու հրատարակել բազմաթիվ եվրոպական լեզուներով: Ուրեմն, բացի իր մեմուարներից, Արարատյանը գրել և ըստ երևույթին առանձին գրքով կամ ժուռնալներում, հրատարակել է բազմաթիվ ճանապարհորդական նոթեր: Ինչպիսիք են եղել այդ նոթերը, դրական-պատմական որպիսի արժեք են ունեցել նրանք, մեզ հայտնի չեն: Բայց այդ վկայությունը ինքնին ենթադրել է տալիս, որ Արարատյանը, համենայն դեպս, երկար ժամանակ զբաղվել է գրական գործունեությամբ:

Պ. Պռոշյանը, հենվելով մի քանի զրույցների վրա, ասում է, որ Արարատյանը իր կյանքի վերջում եկել է Թիֆլիս և հյուր մնացել եղբոր մոտ: Իսկ Վ. Ա. Պարսամյանը պնդում է, որ Գրիբոեդովը և Արարատյանը «միաժամանակ աշխատել են արտաքին գործերի պետական կոլեգիայում և մասնակցել երևանյան արշավանքին»²: Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ աղբյուրներ է նկատի ունեցել Վ. Պարսամյանը այդ հայտարարությունն անելիս, համենայն դեպս, կարևորն այն է, թե այդ և թե Պռոշյանի տեղեկություններում Արարատյանի՝ Կովկասում լինելու հանգամանքը հիշատակվում է: Վ. Պարսամյանը բերում է նաև Հովհաննես Ի. Խաչատուր Լազարյաններին ներսես Աշտարակեցու 1827 թ. հունիսի 30-ին գրած նամակը, ուր կա հետևյալ հիշատակությունը. «Արարատյանն աստ առ մեզ կա և եղիցի մինչև յաւարտ պատերազմացն յԵրևան»³: Պատերազմի ավարտից հետո Արարատյանը վերադարձավ արդյոք Պետերբուրգ: 1831 թ. գրած մի բանաստեղծության մեջ նա ասում է.

¹ ՀՍՍՏ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 57, ցուցակ № 1, գործ 46: Այս բանաստեղծությունը մեզ տրամադրել է արխիվի ավագ գիտաշխատող ընկ. Գրիգոր Հարությունյանը, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

² Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 12-13:

³ Նույն տեղում, էջ 13:

Արդ վաթսնամեայ յարթունս հասակի,
 Ելեալ հիւսիսոյ ի Պօնտոս հասի,
 Ուր պատճառ ձմռան կացեալ մնացի,
 Երթալ ի հնդիկ ոչ ժամանեցի¹:

Նշանակում է Արարատյանը Կովկասից վերադարձել է Պետերբուրգ և նպատակադրվելով Հնդկաստան գնալ՝ ուղևորվել, որպես մեղ թվում է, Տրապիզոն:

Ապա մինչ հասի շնորհօք Քրիստոսի,
 Մեծ նորին ճրագ իբր հրդեհի,
 Որ լցեալ փայլեր հանգոյն արևի,
 Ի յեկեղեցւոյս Տրապիզոնի²:

Թե ուր գնաց այստեղից Արարատյանը՝ հայտնի չէ: Պ. Պոռշյանը պատմում է հետևյալ վրույցը. «Արարատյանը ցանկանալով օր ծերության այցելել յուր ծննդավայր էջմիածինը, այնտեղից գնացել է յուր հոր հայրենիք՝ Մուշր տեսնելու: ...Նա վախճանվել է Լիւմ անապատումն և այսօր այնտեղ է գտնվում նրա շիրիմը»³:

Արարատյանի կյանքը դեռ ուսումնասիրության կարիք ունի: Հետագա որոնումներն այդ ուղղությամբ ավելորդ չէին լինի: Դուցե գտնվեն նրա ձեռագիր կամ հրատարակված, բայց մեղ մահայտ աշխատությունները:

¹ ՀԱՍԻ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 37, ցուցակ № 1, գործ № 46:

² Նույն տեղում:

³ «Վաղարշապատցի Հարություն Արարատյանի կյանքը», Թիֆլիս, 1892, Բարգմանչի հոգմից, էջ Ժ: